ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ





ԱԿՆԱՐԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքը բազմաբնակավայր համայնք է: Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ քաղաք Թումանյանը և Աթան, Ահնիձոր, Դսեղ, Լորուտ, Մարց, Շամուտ, Չկալով, Քարինջ և Քոբայր գյուղերը:

- Համայնքի կենտրոնը հանդիսանում է Թումանյան քաղաքը:
- Տարածքը՝ 38243.81 հա
- Բարձրությունը ծովի մակարդակից՝ 850-1500
- Բնակչությունը՝ 6850մարդ, տնտեսությունը 2113
- Ազգային կազմը ՝ հայեր, եզդիներ, հուներ, ռուսներ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Թումանյան համայնքը հարուստ է պատմական և ճարտարապետական հուշարձաններով՝ միջնադարյան եկեղեցիներ, խաչքարեր, գյուղատեղիներ և ճարտարապետական նշանակության այլ օբյեկտներ որոնք մեծ նշանակություն ունեն ինչպես Հայաստանի, մշակութային ժառանգության համար

- **Բարձրաքաշի Սուրբ Գրիգորի վանք** գտնվում է համայնքի Դսեղ գյուղում և համարվում է հայկական եկեղեցաշինության կարևոր հուշարձաներից մեկը: Վանքը կառուցվել է միջնադարում և առանձնանում է իր ճարտարապետական լուծումներով:

- **Քառսից Մանկան** գտնվում է համայնքի Դսեղ գյուղում : Այն հայտնի է իր յուրահատուկ տեղադիրքով և հոգևոր նշանակությամբ:

- **Մարցի Ամենափրկիչ խաչքարը գ**տնվում է Մարց գյուղում և հայկական խաչքարային արվեստի հրաշալի օրինակ է: Խաչքարը ոչ միայն կրոնական արժեք ունի, այլև պատմական առումով կարևոր է՝ ներկայացնելով միջնադարյան Հայաստանի քարագործության բարձր մակարդակը:

- **Դսեղի Սիրուն խաչը** Դսեղ գյուղում գտնվող այս խաչքարը բացառիկ է իր գեղեցկությամբ և մանրակրկիտ աշխատանքով: Այն դարերի ընթացքում դարձել է գյուղի խորհրդանիշերից մեկը:

Թումանյան համայնքի տարածքում անցկացված պեղումների ընթացքում հայտնաբերվել են մի շարք գյուղատեղիներ, որոնք վկայում են այս տարածաշրջանի վաղ անցյալը

- Հայտնաբերված գյուղատեղիները պարունակում են բնակարանային և տնտեսական կառույցների մնացորդներ, ինչը վկայում է Թումանյան համայնքի տարածքում հնագույն ժամանակներից ի վեր բնակչության գոյության մասին:

- Գտածոներ, ինչպիսիք են կավե ամաններ, զարդեր և աշխատանքային գործիքներ, ընդգծում են տարածաշրջանի մշակութային և առևտրային դերը:

ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Թումանյան համայնքը հայ ժողովրդի մշակութային և գրական կյանքի կենտրոններից է, քանի որ այստեղ են ծնվել և ստեղծագործել հայկական գրականության երկու հսկաներ՝ ամենայն հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը և 20-րդ դարի հայտնի արձակագիր Հրանտ Մաթևոսյանը։

Դսեղում գործում է **Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը**, որը պահպանում է մեծ բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունները՝ ներկայացնելով նրա մանկության, գրական գործունեության և հասարակական կյանքի մանրամասները։



ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՃՈՒՂԵՐԸ

- ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

- ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՃՅՈՒՂ

- **Մարցի գետի ջրվեժը՝ Չռչըռը**
- Գետի վրա գտնվում է մի հիանալի **ջրվեժ**, որը տարածքում հայտնի է՝ որպես յուրահատուկ բնական հրաշք։
- Դսեղ գյուղի տարածքում գտնվող հայտնի բնական հուշարձաններից մեկը՝ «**Դսեղի ծովերը**», յուրահատուկ տեսարժան վայր։
- Այս վայրերը կարող են դառնալ հետաքրքիր զբոսաշրջային ուղղություններ.



ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՃՅՈՒՂ

- Թումանյան համայնքը առանձնանում է իր հարուստ ջրային ռեսուրսներով, որոնք կարևոր դեր ունեն ինչպես համայնքի բնական միջավայրի պահպանման, այնպես էլ, տնտեսական և զբոսաշրջային զարգացման գործում:
- Համայնքի տարածքով է անցնում Հայաստանի ամենաջրառատ գետը՝ Դեբեդը, որը ոչ միայն կենսական նշանակություն ունի շրջակա բնության համար, այլև հանդիսանում է զբոսաշրջային և սպորտային ակտիվության կարևոր կենտրոն:
- Գիժ Դեբեդը՝ իր հոսքի արագությամբ և յուրահատուկ գեղեցկությամբ, հարուստ է անսահման հնարավորություններով:
- Գետի հարակից տարածքները կատարյալ են էկոտուրիզմի, ձկնորսության և արկածային սպորտաձևերի զարգացման համար:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ, ՈՐՊԵՍ ՌԱՖՏԻԳԻ ԿԵՆՏՐՈՆ

- Դեբեդ գետի շնորհիվ Թումանյան համայնքը դարձել է **Հայաստանում ռաֆթինգի զարգացման առաջամարտիկը**:
- **Ռաֆթինգ կայան**
  Թումանյանում գործել է Հայաստանի առաջին ռաֆթինգ- կայանը, որը նպաստել է համայնքի ճանաչմանը՝ որպես ակտիվ հանգստի սիրահարների համար հրաշալի վայր:
- **Տարածաշրջանի հիմնական ռաֆթինգ կենտրոններից մեկը**
  Դեբեդ գետը շարունակում է մնալ տարածաշրջանի ամենապահանջված վայրերից մեկը արկածային սպորտի սիրահարների համար՝ ներգրավելով ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային զբոսաշրջիկներին:

ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Թումանյան համայնքն առանձնանում է իր էկոլոգիապես մաքուր միջավայրով և անկրկնելի բնապատկերներով: Համայնքի լեռները, գեղատեսիլ անտառները և կանաչ տարածքները իդեալական հիմք են ստեղծում էկոտուրիզմի զարգացման համար: Բնապահպանական պայմաններն այստեղ նպաստում են ոչ միայն առողջ միջավայրի պահպանմանը, այլև մեծացնում են տարածաշրջանի գրավչությունը

Համայնքի տարածքում կարելի է հեշտությամբ կազմակերպել հետևյալ էկոտուրիստական ծառայությունները.

- Լեռնագնացություն և արշավներ,
- Վրանային ճամբարների, հագստի կազմակերպում,
- Բնության ուսումնասիրման ծրագրեր,
- Ձիավարություն և հեծանվային արշավներ,
- Տեղական ֆլորայի և ֆաունայի բացահայտում:

ՋԻՊ-ՈՎ ԿԱՄ ՁԻԼ-ՈՎ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ, ՈՐՊԵՍ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՃՅՈՒՂ

Թումանյան համայնքում, որտեղ բազմաթիվ բնապատկերներ ու հետաքրքիր վայրեր կան, ՋԻՊ-ով կամ ՁԻԼ-ով ճամփորդելը հարմար և արդյունավետ տարբերակ է՝ ի շնորհիվ տարածքի բարդ ռելիեֆի:

ՋԻՊ և ՁԻԼ մեքենաները, որոնք հարմար են դժվարանցանելի տարածքներում, ապահովում են ավելի անվտանգ և հարմարավետ ճանապարհորդություն այնպիսի վայրերում, որտեղ սովորական տրանսպորտը չի կարող հասնել:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՃՅՈՒՂ

Թումանյան համայնքն իր բնական պայմաններով և ավանդական գյուղատնտեսական փորձառությամբ կատարյալ վայր է՝ անասնապահության ոլորտում ներդրումներ կատարելու և զարգացնելու համար։ Համայնքի լեռնային և միջին լեռնային արոտավայրերը, մաքուր ջրային ռեսուրսները և խոտհարքները ապահովում են բարձրորակ և բնական միջավայր անասնապահության համար։

Թումանյան համայնքի տարածքում կան ընդարձակ և բարձրորակ արոտավայրեր, որոնք հարմար են տարբեր տեսակի կենդանիների պահպանության համար, ինչպիսիք են՝

•Տավարաբուծություն

•Ոչխարաբուծություն

•Այծաբուծություն

•Խոզաբուծություն

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՃՅՈՒՂ

Թումանյանը իր մարգագետիններով և բնական ռեսուրսներով էկոլոգիապես բարենպաստ վայր է մեղվաբուծության զարգացման համար։ Համայնքի բնական պայմանները, ներառյալ մարգագետիններն ու մաքուր շրջակա միջավայրը, նպաստում են բարձրորակ մեղրի արտադրությանը։ Տեղանքն ապահովում է անհրաժեշտ սննդային հումքը՝ պտղատու ծառեր, ծաղիկներ և այլ բույսեր, որոնք մեղուների համար կարևոր աղբյուր են։

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզ, Թումանյան քաղաք
Կենտրոնական 1

+374 98 048 046

www.tumanyancity.am

tumanyan.city@mail.ru
tumanyan.lori@mta.gov.am

tumanyanmunicipality.am

Թումանյանի
համայնքապետարան
Tumanyan Municipality